ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի փետրվարի 12-ի նիստի N 7 արձանագրությունից
(հարցման կարգով)

ԼՍԵՑԻՆ.- Համաձայն ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգի»՝ ՀՀ 2022 թ. պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու նպատակով գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի **«Քաղաքական ինստիտուտները և տնտեսական զարգացման որակն ու գերակայությունները ՀՀ-ում»** խորագրով հայտը (ծրագրի գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Յուրի Միքայելի Սուվարյան**) հայտը երաշխավորելու մասին հարցը:

Հետազոտության նպատակն է գիտական հիմնավոր մեթոդաբանությամբ մշակել երաշխավորություններ ՀՀ-ում քաղաքական ինստիտուտների և տնտեսական, սոցիալական, անվտանգային զարգացման փոխառնչությունների էական բարելավման, դրանց վրա ազդող բաղադրիչների բարեփոխման ու տեխնոլոգիական զարգացմամբ տնտեսական ու սոցիալական ռազմավարության հիմքի վրա հանրային կառավարման արդյունավետ կազմակերպական կառուցվածքի հայեցակարգի վերաբերյալ: Ծրագրի կատարման առաջին փուլում (2021 թ.) մշակվելու և ռազմավարական ընտրության գործիքակազմով հիմնավորվելու են ՀՀ տնտեսական ու սոցիալական զարգացման գերակայությունները, հետազոտվելու են քաղաքական ինստիտուտների կայացման, դրանց որակական բնութագրիչների շարժընթացի, քաղաքակրթական հասունության աստիճանի փոփոխությունների միտումները և պետական ու տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման ուղղությունները: Ծրագրի իրականացման երկրորդ փուլում (2022 թ.) հանգամանորեն մշակվելու և առաջարկվելու է սոցիալ-տնտեսական և անվտանգային նպատակասլաց ռազմավարություն՝ կարևորելով մշակող արդյունաբեության, այդ թվում՝ ռազմաարդյունաբերական համալիրի շարունակական զարգացման կառուցակարգը: Առաջարկվող երկարաժամկետ ռազմավարության հիմքի վրա և միջազգային փորձի հաշվառմամբ

ներկայացվելու է հանրային կառավարման հաշվեկշռված կազմակերպական կառուցվածք՝ միտված բարձր սոցիալ-տնտեսական արդյունավետության և անվտանգային միջավայրի ապահովմանը: Ծրագիրն իրագործվելու է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, որտեղ պատրաստվում են արդիական գրեթե բոլոր մասնագիտություններով տնտեսագետներ և իրագործվում տնտեսագիտության կարևոր ուղղություններով հետազոտություններ, որոնց համապատասխանում է ուսումնասիրության ենթակա հիմնախնդիրների շրջանակը: Հետազոտության ընթացքում կիրառվելու են համեմատական դիտարկման, վիճակագրական և սոցիոլոգիական վերլուծության, ժամանակակից տնտեսաչափական մեթոդներ: Հետազոտությունն իրականացվելու է 2022 թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Երաշխավորել** գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի **«Քաղաքական ինստիտուտները և տնտեսական զարգացման որակն ու գերակայությունները ՀՀ-ում»** խորագրով հայտը (ծրագրի գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Յուրի Միքայելի Սուվարյան,** ֆինանսավորման ծավալը՝ 5.544.0 հազար ՀՀ դրամ, պահանջվող հաստիքների քանակը՝ 4) և ներկայացնել ՀՀ գիտության կոմիտե՝ 2022 թվականին ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու նպատակով (որոշումն ընդունվեց հարցման կարգով՝ միաձայն, կողմ՝ 53, ձեռնպահ՝ 0, դեմ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. փետրվարի 12

Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի փետրվարի 12-ի նիստի N 7 արձանագրությունից
(հարցման կարգով)

ԼՍԵՑԻՆ.- Համաձայն ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգի»՝ ՀՀ 2022 թ. պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու նպատակով գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի **«Ներդրումային միջավայրի բարելավման և ներդրումների ներգրավման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում»** խորագրով հայտը (ծրագրի գիտական ղեկավար՝ մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Կարեն Համլետի Գրիգորյան**) հայտը երաշխավորելու մասին հարցը:

Հետազոտության նպատակը ներդրումային միջավայրի բարելավմանը և ներդրումների մակարդակի բարձրացմանն ուղղված պետական քաղաքականության գործիքակազմի և միջոցառումների մշակումն ու դրանց կիրառման մակրոտնտեսական ազդեցությունների գնահատումն է: Առաջադրված նպատակին կարելի է հասնել՝ լուծելով հետևյալ խնդիրները. ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում ներդրումների շարժընթացը նախորդ տարիներին, բացահայտել ներդրումների ծավալների վրա ազդեցություն ունեցող գործոնները, վերլուծել ՀՀ-ում իրականացված ներդրումների կառուցվածքը, բացահայտել դրա բարելավման ուղիները, գնահատել ներդրումների ծավալների փոփոխության ազդեցությունները մակրոտնտեսական ցուցանիշների վրա, վերլուծել ՀՀ կառավարության կողմից իրականացված ներդրումային քաղաքականության միջոցառումները նախորդ տարիներին, գնահատել դրանց արդյունավետությունը, ուսումնասիրել ՀՀ ներդրումային միջավայրը, ՀՀ տնտեսության մրցունակությունը, բացահայտել դրանց բարելավման ուղիները և պետական քաղաքականության դերն այդ գործում, ուսումնասիրել օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման հնարավորությունները և խոչընդոտները, բացահայտել վերջիններիս վերացման համար անհրաժեշտ քայլերը, իրականացված վերլուծության հիման վրա մշակել ներդրումների ներգրավման ուղղված պետական քաղաքականության հստակ միջոցառումներ և գնահատել դրանց իրականացման մակրոտնտեսական

ազդեցությունները: Հետազոտության թեմայի շրջանակները և ուղղությունները համապատասխանում են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական և գիտակրթական ուղղություններին և հետազոտական գործունեության զարգացման նպատակներին և խնդիրներին: Հետազոտությունն իրականացվելու է 01.01.2022 – 31.12.2022 ընկած ժամանակահատվածում: Հետազոտության ընթացքում կիրառվելու են վիճակագրական, մաթեմատիկական, համեմատական, գիտական վերացարկման, համակարգային, դինամիկ վերլուծությունների, գործոնային վերլուծությունների, երևույթների և գործընթացների գծապատկերային մեկնաբանման, տնտեսաչափական և մաթեմատիկական մոդելավորման մեթոդներ: Ուսումնասիրությունների ընթացքում կօգտագործվեն հիմնախնդրի հետազոտման միջազգային փորձը, նախկինում կատարված նմանատիպ գիտական ուսումնասիրությունների արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Երաշխավորել** գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի **«Ներդրումային միջավայրի բարելավման և ներդրումների ներգրավման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում»** խորագրով հայտը (ծրագրի գիտական ղեկավար՝ մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Կարեն Համլետի Գրիգորյան**, ֆինանսավորման ծավալը՝ 12.000 հազար ՀՀ դրամ, պահանջվող հաստիքների քանակը՝ 8) և ներկայացնել ՀՀ գիտության կոմիտե՝ 2021 թվականին ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու նպատակով (որոշումն ընդունվեց հարցման կարգով՝ միաձայն, կողմ՝ 53, ձեռնպահ՝ 0, դեմ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. փետրվարի 12

Երևան